ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<u>Անունը, Ազգանունը</u>

Վաչե Գաբրիելյան

<u>Զբաղեցրած պաշտոնը</u>

ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար

<u>Գործուղման վայրը և ժամկետները</u>

Վաշինգտոն և Սան Ֆրանցիսկո (ԱՄՆ) 2017թ. հոկտեմբերի 12-18-ը

<u>Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը</u>)

Մասնակցություն հոկտեմբերի 13-ին և 14-ին Վաշինգտոնում կայացած Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի խմբի կառավարիչների խորհուրդների 2017 թվականի աշնանային ժողովին:

<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>

Այցի ընթացքում տեղի ունեցան մի շարք հանդիպումներ ԱՄՀ-ի և ՀԲ-ի բարձրաստիճան պաշտոնյաների հետ, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով նախագահի տեղակալ Սիրիլ Մյուլլերի և տարածաշրջանի տնօրեն՝ Ֆրանկ Հիմսկերկի, Արժույթի Միջազգային Հիմնադրամի գործադիր տնօրեն՝ Էնթնի դը Լանոյի, Արժույթի Միջազգային Հիմնադրամի տարածաշրջանի հարցերով տնօրեն Ջիհադ Ազուրի հետ և այլն:
Հոկտեմբերի 14-ին տեղի է ունեցել հանդիպում ԱՄՆ պետդեպարտամենտի Եվրոպայի ու Եվրասիայի հարցերով պետքարտուղարի տեղակալ տիկին Բրիջիթ Բրինքի հետ:

Հոկտեմբերի 16-ին ԱՄՆ Սան Ֆրանցիսկո քաղաքում տեղի է ունեցել հանդիպում Քալիֆորնիայի նահանգապետ Ջերի Բրաունի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ներդրումների, վերականգնվող էներգիայի, ինչպես նաև կրթության և գիտության ոլորտներում երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների խորացման հնարավորությունների վերաբերյալ մի շարք հարցեր:

Գործուղվողը

Վաչե Գաբրիելյան

Ստորագրությունը, ամսաթիվը

20.10.2017թ.